

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2013 թվականի N 1512-Ն

«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ ու 6-րդ կետերի և
Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի N 800-
Ն որոշման N 1 հավելվածի 94-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝

1) «Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» 2014 թվականի ծրագիրը՝
համաձայն N 1 հավելվածի.

2) «Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» 2014 թվականի ծրագրի
իրականացման միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշման N 2
հավելվածի 1-ին կետով, 2-րդ կետի 2.2-րդ, 2.3-րդ, 2.4-րդ, 3-րդ կետի 3.3-րդ և 4-րդ
կետի 4.2-րդ ենթակետերով նախատեսված միջոցառումների իրականացումն
ապահովել Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի միջոցով՝
համաֆինանսավորման սկզբունքով, վերջինիս հետ կնքելով համապատասխան
պայմանագիր:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Տ. Սարգսյան

2013 թ. դեկտեմբերի 28
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
դեկտեմբերի 26-ի N 1512-Ն որոշման

«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» 2014
ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ

I. ՆԱԽԱԲԱՆ

1. 2012 թվականին համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությունը պատմական ցուցանիշ է արձանագրել: Միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը հատել է մեկ միլիարդի սահմանագիծը:

2. Միավորված ազգերի կազմակերպության զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ ԶՀԿ) տվյալներով՝

1) 2012 թվականին միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է մեկ միլիարդ 35 միլիոն՝ 4 տոկոսով ավելի, քան 2011 թվականին էր.

2) 2013 թվականի վեց ամսվա տվյալներով միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է շուրջ 500 մլն զբոսաշրջիկ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 5 տոկոսով.

3) վերջին տարիներին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է 4-4.5 տոկոս.

4) 2012 թվականին ներքին զբոսաշրջային այցելությունները համաշխարհային մակարդակով կազմել են մոտավորապես 5-6 միլիարդ:

3. Զբոսաշրջությունը Հայաստանում նույնպես արձանագրում է դրական զարգացումներ՝ գրանցելով թե՛ ներգնա և թե՛ ներքին զբոսաշրջային այցելությունների թվի կայուն և դինամիկ աճ:

4. Վիճակագրական տվյալներով՝

1) 2012 թվականին Հայաստան է ժամանել 843330 միջազգային զբոսաշրջիկ՝ 11.3 տոկոսով ավելի, քան՝ 2011 թվականի նույն ժամանակաշրջանի ընթացքում.

2) 2013 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետություն է ժամանել 677906 զբոսաշրջիկ՝ 12.4 տոկոսով ավելի, քան՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ընթացքում.

3) 2012 թվականին ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 514771. 2011 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 5.2 տոկոս.

4) 2013 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 587307. 2012 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 38.2 տոկոս:

5. 2000-2012 թվականների ընթացքում Հայաստան այցելած ներգնա զբոսաշրջիկների թիվն ավելացել է ավելի քան 18 անգամ:

II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6. Ծրագրի մշակման համար հիմք են՝

1) «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

2) 2008 թվականի փետրվարի 13-ին Հայաստանի Հանրապետության

կառավարության հավանությանն արժանացած Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

7. Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել՝

1) միջազգային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը.

2) դեպի Հայաստան զբոսաշրջային հոսքերի շարունակական ավելացմանը (շուրջ 10 տոկոս).

3) համայնքներում զբոսաշրջության զարգացմանը.

4) ներքին զբոսաշրջության զարգացմանը.

5) համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությանը Հայաստանի ինտեգրմանը:

IV. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Ծրագրի նպատակների իրականացման համար ծրագրային միջոցառումներն ուղղված են հետևյալ խնդիրների լուծմանը՝

1) միջազգային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ամրապնդում.

2) հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում.

3) զբոսաշրջային ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում.

4) համայնքներում զբոսաշրջային ներուժի բացահայտում և ներքին ու միջազգային զբոսաշրջային շուկայում այն ներկայացնելը.

5) զբոսաշրջության ապակենտրոնացում դեպի հանրապետության մարզեր և համայնքներ.

6) ակտիվ և արդյունավետ միջազգային համագործակցության իրականացում:

V. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

9. 2014 թվականին շարունակվելու է հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացման, ակտիվ մարքեթինգային քաղաքականության իրականացման, համայնքներում զբոսաշրջության զարգացման ու արդյունավետ միջազգային համագործակցության ապահովման միջոցառումների իրականացումը:

10. Մարքեթինգային քաղաքականության իրականացման շրջանակներում նախատեսվում է ավելացնել հեղինակավոր միջազգային ցուցահանդեսների թիվը, որոնց՝ Հայաստանը կմասնակցի պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ: Նախատեսվում է նաև ընդլայնել ճանաչողական այցերի կազմակերպման աշխարհագրությունը, ավելացնել գովազդային-տեղեկատվական նյութերի քանակն ու տեսականին:

11. 2014 թվականին կշարունակվի պետական աջակցությունը փառատոների և տոնակատարությունների կազմակերպմանը՝ ավելացնելով դրանց թիվը և ընդլայնելով դրանց կազմակերպման աշխարհագրությունն ու տևողությունը: Փառատոների կազմակերպումը նպաստում է համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, ներգնա ու ներքին զբոսաշրջային հոսքերի ավելացմանը:

12. Համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի ու 10-րդ հոդվածի պահանջների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 946-Ն որոշման 2-րդ կետի «ա» ենթակետով հաստատված ընթացակարգի՝ 2014 թվականին կշարունակվի հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման և պարբերական գնահատման գործընթացը Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում՝ ի նպաստ հյուրանոցային ծառայությունների որակի ապահովման:

13. Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովումն էական նշանակություն ունի հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացման գործընթացում: 2014 թվականին պետական աջակցություն կցուցաբերվի Գառնիում, Դիլիջանում և Գորիսում տեղական համայնքների հետ համագործակցությամբ զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը:

14. 2014 թվականին պետական աջակցություն կցուցաբերվի Զբոսավարների ասոցիացիաների համաշխարհային ֆեդերացիայի (WFTGA) հետ համագործակցության շրջանակներում Երևանում Զբոսավարների միջազգային կրթական կենտրոնի հիմնադրմանն ու գործունեության ապահովմանը: Կենտրոնի գործունեությունը կնպաստի միջազգային չափանիշներին համապատասխանող, բարձրակարգ զբոսավարների պատրաստմանը և վերապատրաստմանը, միջազգային շուկայում Հայաստանի հեղինակության ու մրցունակության բարձրացմանը:

15. Ծրագրում ներառված են նաև միջոցառումներ՝ ուղղված զբոսաշրջային տների ցանցի ձևավորմանն ու զարգացմանը՝ ի նպաստ համայնքներում զբոսաշրջության զարգացման և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացման գործընթացի:

16. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետով զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման ապահովումը սահմանված է որպես պետական քաղաքականության հիմնական սկզբունք, իսկ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով միջազգային կապերի զարգացմանը և միջազգային ինտեգրմանը նպաստող համակարգի ստեղծումը՝ որպես պետական քաղաքականության հիմնական նպատակ: Միջազգային համագործակցության շրջանակներում 2014 թվականին միջոցառումները կուղղվեն զբոսաշրջության

բնագավառում համագործակցության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի և գործնական ծրագրերի կատարմանը, ինչպես նաև ՄԱԿ ԶՀԿ, ԱՊՀ և այլ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում ծրագրերի և միջոցառումների իրականացմանը կամ դրանց մասնակցությանը:

VI. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՄ

17. Ծրագրի իրականացումը նախատեսվում է ապահովել շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և միջազգային կազմակերպությունների համագործակցությամբ:

VII. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

18. «Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» 2014 թվականի ծրագիրը կիրականացվի Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 75000.0 հազ. դրամի չափով, և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ):

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Գաբրիելյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
դեկտեմբերի 26-ի N 1512-Ն որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց

«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6
1.	Զբոսաշրջության ոլորտի գովազդային-տեղեկատվական	միջազգային շուկայում Հայաստանի՝ որպես		2014 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե ՀՀ

	ապահովման համակարգի կատարելագործում	զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի շարունակական ամրապնդում՝ համաձայն 2008 թվականին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած Զբոսաշրջության զարգացման հայեցակարգի			օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
1.1.	Հայաստանը ներկայացնող գովազդային-տեղեկատվական նյութերի մշակում, տպագրում և տարածում	2014 թվականին Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները ներկայացված կլինեն պահանջարկի շուկաներում՝ բազմալեզու գովազդային-տեղեկատվական նյութերի, ինչպես նաև անընդհատ թարմացվող ինտերնետային կայքի միջոցով	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությամբ)		ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
1.1.1.	Հայաստանը գովազդող և բնութագրող նյութերի տպագրում	Հայաստանը գովազդող և բնութագրող նյութերի տպագրում՝ 3500 հատ		2014 թ. ընթացքում	
1.1.2.	www.armeniainfo.am կայքի լրացում և	www.armeniainfo.am մասնագիտացված կայքի մշտապես		2014 թ. ընթացքում	

	թարմացում	լրացում և թարմացում			
1.1. 3.	Պետական աջակցություն զբոսաշրջային- տեղեկատվական կենտրոնների գործունեությանը	երեք զբոսաշրջային- տեղեկատվական կենտրոնների գործունեությանը պետական աջակցություն		2014 թ. ընթացքում	
1.1. 4.		«Արարատից Եվրոպա» տեսաֆիլմի ձեռքբերում՝ 100 հատ		2014 թ. ընթացքում	
1.2.	Մասնակցություն միջազգային ճանաչված զբոսաշրջային ցուցահանդեսներ ին և տոնավաճառներ ին	2014 թվականին կապահովվի Հայաստանի մասնակցությունը միջազգային հեղինակավոր 4 զբոսաշրջային ցուցահանդեսների, ինչը կնպաստի միջազգային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնելու և հայաստանյան ու օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների գործարար կապերի հաստատման և ամրապնդման գործընթացին	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությո ւամբ)	2014 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենսդրությա մբ չարգելված այլ միջոցներ
1.3.	Օտարերկրյա լրագրողների՝ Հայաստան	2014 թվականին ճանաչողական այցերի	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2014 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

	Ճանաչողական այցերի կազմակերպում	կազմակերպման շրջանակներում Հայաստան կայցելի շուրջ 20 օտարերկրյա լրագրող՝ ապահովելով Հայաստանի զբոսաշրջային արդյունքը հանրահայտ լրատվամիջոցներով ներկայացնելը:	Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությ ամբ)		ՀՀ օրենսդրությա մբ չարգելված այլ միջոցներ
2.	Ավանդական փառատոների և զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տոնակատարույթ յան կազմակերպում	Պետություն- մասնավոր հատված համագործակցությ ամբ՝ 2014 թվականին նախատեսվում է 6 փառատոնի և մեկ տոնակատարությա ն իրականացում: Փառատոների կազմակերպումը կնպաստի համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման ն ու մրցունակության բարձրացմանը:		2014թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենսդրությա մբ չարգելված այլ միջոցներ

2.1.	Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տոնակատարություն	Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տոնակատարության կազմակերպում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
2.2.	Պետական աջակցություն Հայ խոհարարական ավանդույթների զարգացման ու պահպանման հասարակական կազմակերպությանը՝ Հայոց ավանդական տոնածիսական ուտեստների փառատոնի կազմակերպման համար	Հայոց ավանդական տոնածիսական ուտեստների փառատոնի պատշաճ կազմակերպում ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությամբ)		
2.3.	Պետական աջակցություն «Արենի» փառատոն» հիմնադրամին՝ Գինու փառատոնի կազմակերպման համար	Գինու փառատոնի պատշաճ կազմակերպում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությամբ)		
2.4.	Պետական աջակցություն «Արենի» փառատոն» հիմնադրամին՝ Գյումրիում արվեստների և արհեստների փառատոնի	Արվեստների և արհեստների փառատոնի պատշաճ կազմակերպում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությամբ)		

	կազմակերպման համար		ամբ)		
2.5.	Պետական աջակցություն Գործիս քաղաքում «Սյունյաց ավանդույթներ» ամենամյա փառատոնի կազմակերպմանը	Գործիս քաղաքում ,Սյունյաց ավանդույթներե ամենամյա փառատոնի կազմակերպում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն		
2.6.	Պետական աջակցություն «Օձունի գանձերը» փառատոնի կազմակերպմանը	«Օձունի գանձերը» փառատոնի կազմակերպում ՀՀ Լոռու մարզի Օձունի համայնքում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն		
2.7.	Պետական աջակցություն «Մշակութային վերածնունդ» փառատոնի կազմակերպմանը	«Մշակութային վերածնունդ» փառատոնի կազմակերպում ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն		
3.	Զբոսաշրջության հիմնախնդիրների լուծման միջոցառումների իրականացում	զբոսաշրջիկներին հայրենական զբոսաշրջային գրավչությունների մասին տեղեկատվությամբ ապահովմանը, ծառայությունների որակի բարձրացմանը, մարդկային ռեսուրսների և ենթակառուցվածքների զարգացմանը նպաստող		2014 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ

		միջոցառումների իրականացում			
3.1.	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման և պարբերական գնահատման գործընթաց	հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման և պարբերական գնահատման գործընթացի իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
3.2.	Պետական աջակցություն Երևանում զբոսավարների տարածաշրջանային ուսումնական կենտրոնի հիմնադրմանն ու գործունեությանը	զբոսավարների ասոցիացիաների համաշխարհային ֆեդերացիայի հետ համագործակցության շրջանակներում Երևանում զբոսավարների տարածաշրջանային ուսումնական կենտրոնի հիմնում և գործունեության ապահովում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
3.3.	Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի ստեղծմանը պետական աջակցություն	մեկ տեղեկատվական կենտրոնի հիմնում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությամբ)		
3.4.	Հուշանվերների և տեղական այլ արտադրանքի վաճառքի համար օրինակելի տաղավարի ստեղծմանը	հուշանվերների և տեղական այլ արտադրանքի վաճառքի համար օրինակելի տաղավարի հիմնում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		

	պետական աջակցություն				
3.5.	Զբոսաշրջային տների՝ Բեդ ընդ Բրեքֆասթ (B&B) համակարգի ձևավորմանն ու զարգացմանը նպաստելու նպատակով հանրապետությ ան մարզերում տեղի բնակիչների մասնակցությամբ սեմինարների կազմակերպում	զբոսաշրջային տների՝ Բեդ ընդ Բրեքֆասթ (B&B) համակարգի ձևավորմանն ու զարգացմանը նպաստելու նպատակով երկու մարզում սեմինարների կազմակերպում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
4.	Զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցու թյան ծավալում	Զբոսաշրջության ոլորտում իրավապայմանագր ային պարտավորություն ների կատարումն ապահովելու, ինչպես նաև միջազգային համագործակցությ ունն առավել ակտիվացնելու նպատակով 2014 թվականին նախատեսվում է իրականացնել համագործակցությ ան զարգացման միջոցառումներ, որոնք բխում են համագործակցությ ան համաձայնագրերից			ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենսդրությա մբ չարգելված այլ միջոցներ

		և գործնական ծրագրերից:			
4.1.		ՄԱԿ ԶՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպություն ների կողմից կազմակերպվող ծրագրերին ու աշխատանքային հանդիպումներին մասնակցություն, զբոսաշրջության բնագավառի մասնագետների (պետական և մասնավոր հատվածների) վերապատրաստու մ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ն	2014 թ. ընթացքու մ	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենսդրությա մբ չարգելված այլ միջոցներ
4.2.		ԱՊՀ տարածաշրջանում «2014 թվականը զբոսաշրջության տարի» միջոցառման կազմակերպում և անցկացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (համաձայնությ ամբ)	2014 թ. ընթացքու մ	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենսդրությա մբ չարգելված այլ միջոցներ

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Գաբրիելյան